Ի. Ալիևի հարցազրույցի մի շարք թեզիսների մասին

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 19.01.2025 թ.[1]

ԱդրՀ նախագահ Ի. Ալիևի կողմից իր լրատվամիջոցներին 07.01.2025 թ.-ին տված հարցազրույցում ՀՀ նկատմամբ ագրեսիվ հայտարարությունները միանգամայն անսպասելի են: Ադրբեջանի ղեկավարի մտքերը չեն տեղավորվում բանակցային գործընթացի տրամաբանության մեջ, գործընթաց, որը թեև ցածր դինամիկա ունի, բայց իր գոյությամբ ենթադրում է կառուցողականության մթնոլորտի պահպանում ու կողմերի կողմից դիվանագիտական զսպվածության դրսևորում: Մինչդեռ Ի. Ալիևը ՀՀ-ն անվանել է *«ֆաշիստական երկիր»*, որին պետք է *«վերջնականապես հաղթել»* և բացահայտ սպառնացել ուժով բռնագրավել, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքը»:

Հարցազրույցի ընթացքում նա քննադատության է ենթարկել Ֆրանսիային՝ նրա, իբր, «*ընդգծված հակաադրբեջանական քաղաքականության*» և միջազգային ասպարեզում ապակառուցողական նախաձեռնությունների համար: Միևնույն ժամանակ՝ Ալիևն Իրանի հանդեպ իր դժգոհությունն է հայտնել ԻԻՀ-ի որոշ հոգևոր վերնախավերի հռետորաբանության կապակցությամբ, ովքեր «*ամենուրեք*» քննադատում են Բաքվին: Եվ վերջապես՝ նա հնչեցրել է հակաիսրայելական ուղերձներ: Ընդսմին, Ի. Ալիևը ոչ մի անգամ չի հիշատակել *«Իսրայել»* բառը, այլ հայտարարել է Պաղեստինին իր անվերապահ աջակցության, *«երկու պետություն»* սկզբունքի և «Իսլամական համագործակցության կազմակերպության» (ԻՀԿ) և «Արաբական պետությունների լիգայի» (ԱՊԼ) հետ ԱդրՀ-ի համերաշխության մասին, դրանով իսկ պարզ դարձնելով, որ ինքը չի ընդունում հրեական պետության դիրքորոշումը: Իլհամ Ալիևը նաև քննադատել է ԱՄՆ-ի հեռացող նախագահ Ջ. Բայդենի վարչակազմին՝ Բաքվի նկատմամբ իբր *«ոչ կառուցողական գործողությունների»* համար՝ ընդգծելով, որ Դ. Թրամփից ակնկալում է դրական ազդանշաններ, որոնք կարող են հիմք ծառայել ապագա *«ամերիկա-ադրբեջանական ռազմավարական գործընկերության»* համար:

Ռուսաստանի մասին Ալիևը ոչ մի բացասական խոսք չի հնչեցրել, ինչը, հավանաբար, պայմանավորված է նրանով, որ ԱդրՀ ղեկավարն արդեն հասցրել էր կոշտ քննադատության ենթարկել նրան՝ AZAL ինքնաթիռի 25.12.2024 թ. կործանման հետ կապված իր նախկին հայտարարություններում:

Կարծես թե՝ Ադրբեջանի առաջնորդն ասուլիսը հրավիրել է արտաքին և ներքին լսարանին մի քանի կարևոր գաղափարներ փոխանցելու մտադրությամբ: Այսպիսով, չնայած ինքնիշխանության վերականգնման, պետականաշինության և տնտեսության մեջ վերջին տարիներին գրանցված *«դարակազմիկ հաջողություններին»*, Բաքուն, պարզվում է, ունի բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք հիմնականում կապված են *«հայկական*

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 17.01.2025 թ.:

ռևանշիզմի» և որոշ հարևանների ու միջազգային գործընկերների անբարյացակամ պահվածքի հետ: Ալիևի խոսքով, հայ-ադրբեջանական հակամարտությունը դեռևս հեռու է խաղաղ ճանապարհով կարգավորումից, մի շարք արևմտյան երկրներ շարունակում են իրենց *«ծավալապաշտական քաղաքականությունը Հարավային Կովկասում»*, իսկ հարևան Ռուսաստանն ու Իրանը սպառնալիք են ստեղծում Բաքվի անվտանգության համար՝ առանց հաշվի առնելու նրա շահերն ու հեղինակությունը: Միևնույն ժամանակ, Ալիևի բոլոր պատասխաններում կարմիր թելի պես անցնում է այն միտքը, թե ԱդրՀ-ն առաջնորդվում է բացառապես իր օրակարգով և մտադիր չէ ենթարկվել արտաքին խաղացողների ճնշմանը, որոնք ձգտում են Բաքուն օգտագործել սեփական ազգային շահերին հակառակ:

Թուրքիան նշվել է որպես միակ ուժը, որի հետ անվերապահ փոխըմբռնում է արտահայտել Ի. Ալիևը հարցազրույցի ժամանակ: Նրա խոսքով, Ադրբեջանը լիակատար վստահություն է տածում միայն Թուրքիայի նկատմամբ և կիսում է նրա բոլոր տեսակետները միջազգային օրակարգի վերաբերյալ: Սա նշանակում է, որ միայն Անկարային կթույլատրվի մասնակցել Բաքվի հետագա վարքագծի մշակմանը տարածաշրջանային և գլոբալ աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում:

Ադրբեջանի առաջնորդի խոստովանությունները հանգեցնում են այն եզրակացության, որ Բաքուն դրանով փորձում է ազատվել մի շարք պարտավորություններից, որոնք ժամանակին ստանձնել էր միջազգային «գործընկերների» և «դաշնակիցների» առջև: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է ՌԴ-ին և Իսրայելին, որոնց հետ հարաբերությունները վերջին տարիներին այնքան են խորացել, որ ակնհայտորեն Բաքվի համար հղի են մեծ բարդություններով՝ աշխարհում փոփոխվող աշխարհաքաղաքական իրավիճակի համապատկերում: Այս վարկածն ամրապնդում է նաև այն ժամանակը, որն Ադրբեջանի ղեկավարն ընտրել է իր աղմկահարույց հարցազրույցի համար: Այն նշանակվել է երեք նշանակալից իրադարձությունների նախօրեին, որոնք կարող են արմատապես փոխել ուժերի ներկայիս դասավորվածությունը միջազգային ասպարեզում, ինչի կապակցությամբ Բաքուն ավելի քիչ տեղ կունենա խուսանավելու տարածաշրջանի հիմնական դերակատարների միջև:

1. Ալիևի հարցազրույցից մի քանի օր անց՝ 17.01.2025 թ., Մոսկվայում պետք է ստորագրվեր համաձայնագիր ՌԴ-ի և ԻԻՀ-ի միջև «ռազմավարական գործընկերության» մասին, որն, ըստ էության, նպատակաուղղված է սերտ ռազմաքաղաքական դաշնակցային հարաբերությունների կառուցմանը՝ դրանից բխող հետևանքներով հանդերձ: ՌԴ-ի հետ 22.02.2022 թ. կնքված, ըստ էության, դաշնակցային պայմանագրի, ինչպես նաև «Հյուսիս–Հարավ» գլոբալ առևտրա-էներգետիկ նախագծին մասնակցության պատճառով մի շարք իրավական

համաձայնագրերի ուժով Ադրբեջանը կանգնած է Արևմուտքին գլոբալ դիմակայելու ռուս-իրանական նախագծի ուղեծրի մեջ վերջնականապես ներքաշվելու վտանգի առաջ, դիմակայություն, որը կարող է մոտ ապագայում ռազմական առճակատման վերաճել: Այս համատեքստում Ադրբեջանի աշխարհագրական դիրքը, որը մինչև վերջերս համարվում էր դրա առանցքային առավելություններից մեկը, ծայր աստիճան խոցելի է դարձնում նրան, եթե ռուս-իրանական նոր երկյակը, ռազմավարական նկատառումներից ելնելով, որոշի ավելի հուսալի ցամաքային, ծովային և օդային հաղորդակցություններ հաստատել ՌԴ-ի և Իրանի միջև:

2. Դ. Թրամփն, ով իր նախագահական երկրորդ ժամկետը սկսում է 20.01.2025 թ., հակառակ տարածված կարծիքի, կարող է ստանձնել Ջ. Բայդենի վարչակազմի մտահղացումները Հարավային Կովկասում և ավելի կոշտ ճնշում գործադրել Բաքվի վրա՝ նպատակ ունենալով ի չիք դարձնել ռուս-իրանական ռազմավարությունը: Մեծ է նաև այն բանի հավանականությունը, որ Վաշինգտոնն ու Թել Ավիվը փորձեն Բաքվին ստիպել առճակատման քաղաքականություն վարել Իրանի դեմ, ինչն Ադրբեջանի համար հղի է ծանր հետևանքներով:

3. Մերձավոր Արևելքում լարվածության աճ կա Բաքվի ավանդական դաշնակիցների՝ Թուրքիայի և Իսրայելի միջև, որը մոտ ապագայում կարող է առճակատման վերածվել Սիրիայում՝ պրոքսի ուժերի ներգրավմամբ: Նման սցենարների հետևանքները կարող են վտանգավոր լինել Բաքվի համար, որն իր մարտական ներուժը կառուցել է այս երկու երկրների հետ փոխգործակցության հիման վրա և շարունակում է հարաբերությունների բարդ հավասարակշռություն պահպանել ՌԴ-ի և ԻԻՀ-ի հետ՝ հենվելով և՛ Անկարայի, և՛ Թել Ավիվի վրա: Թուրք-իսրայելական հարաբերությունները «*թեժ*» փուլ մտնելու պարագայում Ադրբեջանը ստիպված կլինի իր ռազմավարական ընտրությունը կատարել հօգուտ իրեն առավել մերձավոր կողմի: Գործնականում անհնարին է դաշնակիցների ինքնակամ դուրս գալը հակամարտությունից, եթե խոսքը չի վերաբերում Ադրբեջանի համար այնպիսի իրավիճակի մասին, որը բացառում է վերջինիս կանխակալ աջակցությունը կողմերից որևէ մեկին: Ըստ երևույթին, Ադրբեջանը ցանկանում է ստեղծել հենց այսպիսի իրավիճակ՝ որպես թուրք-իսրայելական հակամարտությունից և Իսրայելի ու Թուրքիայի շահերի հակամարտության մեջ ներքաշվելուց հեռու մնալու նախապայման:

Եվ այսպես. ինչպես ցույց տվեց խնդրո առարկա հարցազրույցը, Բաքուն, **առաջին հերթին,** ցանկանում է ցույց տալ, որ չունի «*անվերապահ*» դաշնակիցներ, որոնց կարող է միանալ այն պայմաններում, երբ Ադրբեջանն ինքը «*կենսական գոյութենական բնույթի սպառնալիքների*» է բախվում տարածաշրջանում և աշխարհում: Դա բոլոր կողմերին ցույց է տալիս, որ Բաքուն ունի կուտակված հակասությունների և չլուծված հարցերի բեռ Ռուսաստանի, Իրանի, Իսրայելի, ԵՄ-ի և ԱՄՆ-ի հետ, որոնք թույլ չեն տալիս նրան որևէ

արմատական ընտրություն կատարել: Փաստորեն, դա նույնիսկ վերաբերում է Թուրքիային, որը, չնայած շահերի անվերապահ համընկնման մասին Ալիևի հռետորաբանությանը, դեռևս չի կարողացել Ադրբեջանի կողմից հասնել հայ-ադրբեջանական «*խաղաղ գործընթացի*» այն հանգուցալուծմանը, որն իրեն հրատապ անհրաժեշտ է:

Երկրորդ՝ Ալիևը հերթական անգամ վերակենդանացնում է հայ-ադրբեջանական առճակատման թեման՝ ենթադրաբար այն բանի համար, որ ցույց տալ, թե Ադրբեջանի անվտանգության խնդիրները դեռևս չեն սպառվել: *«Հայկական ֆաշիզմի»* և իբր հարաճուն *«հայկական ռևանշիզմի»* մասին նրա արմատական հռետորաբանությունը նպատակ ունի ցույց տալ, որ Ադրբեջանը *«նոր պատերազմի շեմին է»* և, հետևաբար, չի կարող իրեն թույլ տալ ներքաշվել տարածաշրջանային և համաշխարհային դերակատարների լայնածավալ խաղերի մեջ: Այս տրամաբանությունը ներառում է նաև բանակցային օրակարգի ձգձգումը, ինչը Բաքվին հնարավորություն է տալիս խուսանավելու գլոբալ կենտրոնների միջև՝ պարբերաբար անդրադառնալով պատերազմական իրավիճակում Ադրբեջանի գործնական գոյության պայմաններում աշխարհաքաղաքական վեկտորի վերջնական ընտրության վաղաժամ լինելուն:

Միջազգային իրավիճակի վերլուծությունը հուշում է, որ Բաքուն գոնե այս պահին չունի Սյունիքի տարածքի դեմ ագրեսիայի համար անհրաժեշտ միջազգային կոնսենսուս, ինչպես դա եղավ 2020 և 2023 թվականներին Արցախի Հանրապետության պարագայում: Սակայն կարելի է ակնկալել, որ հայ-ադրբեջանական խնդիրը դաշնակիցների և գործընկերների պահանջներից հեռու մնալու խուսանավման տրամաբանության մեջ Բաքուն կարող է հայկական սահմանին տեղային բնույթի բախումներ նախաձեռնել: Սա իրավիճակի միանգամայն սպասելի զարգացում է, որը, Բաքվի տեսանկյունից, թույլ կտա խառնել Արևմուտքի, Ռուսաստանի, Թուրքիայի, Իսրայելի և Իրանի ծրագրերն ու հեռու մնալ Ադրբեջանի վրա նրանց հարաճուն բազմակողմ ճնշումից:

Ընդհանուր առմամբ, 07.01.2025 թ. տված հարցազրույցում Իլհամ Ալիևի ուղերձների և ազդանշանների վերանայումն այն տպավորությունն է ստեղծում, որ Ադրբեջանի նախագահը գտնվում է առավելապես անհանգիստ վիճակում, քան զգում ինքնավստահություն, ինչը նա փորձում էր փոխանցել իր լսարանին: Սա միանգամայն հասկանալի է՝ հաշվի առնելով աշխարհաքաղաքական իրավիճակի ծայրահեղ բարդությունը, որի մեջ հայտնվել է Ադրբեջանը հարևան այլ երկրների, այդ թվում՝ Հայաստանի հետ միասին, որի խնդիրներն, առարկայական պատճառներով, պակաս բարդ չեն: